



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

«29» հուլիսի 2019 թվականի N: 358-Վ ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010  
ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի N° 176-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N° 762 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգի» 4-րդ և 5-րդ կետերի դրույթներով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթային հանձնաժողովի կազմում Վանիկ Սերոբյանի փոխարեն ընդգրկել Հովհաննես Մաթոսյանին:

2. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2010 թվականի օգոստոսի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության

մրցութային հանձնաժողովի կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2008 թվականի հունվարի 7-ի № 4 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 176-Ա որոշման հավելվածում «Վանիկ Սերոբյան» բառերը փոխարինել «Հովհաննես Մաթոսյան» բառերով:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

